
ՀԵՏՆԱԼԵԶՎԱՅԻՆ ԵՎ ԿՈԿՈՐԴԱՅԻՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ
ԱՆԿՈՒՄԸ ԲԱՌԱՍԿԶԲՈՒՄ
(Հայերենի, մյուս հնդեվրոպական և ֆիննաուգրական լեզուների տվյալների
հիման վրա)

ԳՈՀԱՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Մի շարք լեզուների բառային նյութի քննությունը ցույց է տալիս, որ բառակազմի հետնալեզվային պայթականները կարող են քմայնանալ, շրթնայնանալ կամ պարզապես թուլանալ՝ առանց շրթնայնանալու կամ քմայնանալու: Համապատասխանաբար, հետնալեզվային պայթականները կարող են վերածվել քմային կամ շրթնային ձայնորդների (y կամ w/v), անցնելով g^y/k^y , g^w/k^w փուլերը: Այդ անցումը՝ $g(k) \rightarrow (g^y) \rightarrow y$, $g(k) \rightarrow (g^w) \rightarrow w$, փորձել ենք ցույց տալ մի շարք հնդեվրոպական լեզուների, ինչպես նաև հայերենի որոշ բարբառների օրինակով: Եթե հետնալեզվային պայթականները «չեզոք» դիրքում են մնում, ապա նրանք թուլանալով՝ կարող են վերածվել շփականների (x, γ), կոկորդայինների՝ $k(g, k^h) \rightarrow x \rightarrow h \rightarrow \emptyset^2$:

Ինչպես արդեն նշել ենք, մեր համոզմամբ, հայերենի ե և ո տառերը բառակազմում նախապես պարզ ձայնավորներ չեն ներկայացրել, այլ հնչել են ye և wo/vo, իսկ բարբառներում հանդիպող e և o հնչումը y և w/v հնչյունների թուլանալու հետևանք է³:

Մի շարք լեզուների բառային նյութի քննությունից կարելի է ենթադրել, որ պայթական + ձայնորդ հնչյունախմբով (պայմանականորեն՝ Kr, Kl, Kn) սկսվող բառերի վաղնջական արմատը հենց այս հնչյունախումբն է: Որպես կանոն, այստեղ ենթադրվում է անհետացած ձայնավոր, հետևաբար ավելի ճիշտ կլինի այդ հնչյունախմբերն արտահայտել KVR, KVL, KVn ձևով, որտեղ V ձայնավորը կարող է լինել նաև \emptyset :

Տիպաբանության առումով արժեքավոր նյութ են պարունակում այն լեզուները, որոնց ավանդված շրջանի պատմությունը փաստում է նկատելի հնչյունական անցումներ: Այդ լեզուների թվին է պատկանում անգլերենը: Այդ լեզվում բառերի գրության և արտասանության ձևերի միջև գոյություն ունի լուրջ խզում, որն, անշուշտ, պատմական հնչյունափոխության հետևանք է:

¹ Գ. Ն ի կ ո ղ ո ս յ ա ն. Հայերենի և հնդեվրոպական մի շարք լեզուների տիպաբանական համեմատության ուրվագծեր. – ՊԲՀ, 2008, № 1, էջ 272:

² Գ. Ն ի կ ո ղ ո ս յ ա ն. Հայերենի ստուգաբանության որոշ խնդիրներ ըստ նոստրատիկ լեզվաբանության տվյալների. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2009, № 2, էջ 188:

³ Գ. Ն ի կ ո ղ ո ս յ ա ն. Հայերենի և հնդեվրոպական մի շարք լեզուների տիպաբանական համեմատության ուրվագծեր, էջ 262–264:

Դիտարկենք բառակազմի կն (կամ gn) հնչյունախմբով սկսվող բառերից մի քանիսը, որտեղ պայթականը, որպես կանոն, չի արտասանվում: Գերմանական լեզուների տվյալները վկայում են, որ այդ բաղաձայնը նախապես արտասանվել է՝ անզլ. knee⁴ - գերմ. Knie⁵, նորվ. kne⁶, իսլ. kne (=hne)⁷ «ծունկ», անզլ. know - գերմ. kennen «գիտենալ», անզլ. knead «հունցել» - նորվ. gna, շվեդ. knada⁸, իսլ. hnoða, բոլորը՝ «հունցել» նշանակությամբ, նորվ. gni, բրբռ. knø, շվեդ. gnida, դան.⁹ gnide «տրորել»: Հին անգլերենում ևս պայթականը արտասանվել է՝ cnēo(w) «ծունկ», cnāwan «գիտենալ», cnedan «հունցել»¹⁰: Այլ լեզուների տվյալների հիման վրա հնարավոր է հաստատել ձայնավորի գոյությունը՝ անզլ. knee - լատին. genu, սանս. जानु [jānu]¹¹, պարս. zan, ou. zonyg/zonug¹², հայ. ծունկ, անզլ. know, գերմ. kennen, գոթ. kunnan, շվեդ. kunna, իսլ. kunna «գիտենալ», հինդի जानना [jānnā], ou. zony: zynd, լատիշ. zin'ât¹³, լիտվ. žinoti¹⁴, հայ. ծանել/քննել¹⁵, անզլ. knead արմատի դիմաց՝ հայ. հունցել (նաև հնձան¹⁶), և այլն:

Նույնիսկ միայն գերմանական լեզուների տվյալների հիման վրա հնարավոր է ներկայացնել k(g) → kn(gn) → hn → n անցումը, օրինակ՝ նորվ. gnage, շվեդ. gnaga «կրծել», շվեդ. nagga «կրծել, ծակել», իսլ. naga, դան. gnave «կրծել», անզլ. gnaw (g-ն չի արտասանվում) «կրծել», գերմ. Knie, նորվ. kne, իսլ. kne/hne, անզլ. knee [ni:]:

Անգլերեն knock, knead, knife, gnaw բառերում նախնական արմատն է kn-(gn-), որը համապատասխանում է հայերեն գան- արմատին (նաև՝ սանս. हन [han] «ծեծել, սպանել», घन [ghana] «սպանություն», իռլ. guin «սպանություն», լիտվ. kankinti «տանջել», հուն. καίνω «սպանել», κνάω «տրորել, գզել», καίνις, ἴδος, κνώδων «դանակ, սուր», κεντεω «խոցել, վիրավորել»)՝¹⁵: Այդ արմատի մեկ այլ տարբերակը կապված է կնիք բառի հետ, որը թեպետ համարվում է սեմական փոխառություն, շատ որոշակի զուգահեռներ ունի հ.-ե. լեզուներում՝ անզլ. knock (հին անզլ. cnocian) «թակել», gnaw (հին անզլ. gnaga) «կրծել», գերմ. nagen, նորվեգ. knakke «թակել», շվեդ. knäcka «ջարդել, ճեղքել», դան. knuge, նորվ. knuge «սեղմել», դան. knæk «կոտրել», նորվ. gnigge, gnikke,

⁴ Большой англо-русский словарь (ред. И. Ф. Гальперин). М., 1972.

⁵ Գ. Մ. Ա ն դ ր է ա յ ն. Գերմաներեն-հայերեն բառարան, Երևան, 2005:

⁶ В. Д. А р а к и н. Норвежско-русский словарь. М., 1973.

⁷ В. П. Б е р к о в. Исландско-русский словарь. М., 1962.

⁸ Д. Э. М и л а н о в а. Шведско-русский словарь. М., 1973.

⁹ Н. М. К р ы м о в а. Датско-русский словарь. М., 1975.

¹⁰ The Oxford Dictionary of English Etymology. Oxf., 1966:

¹¹ В. А. К о ч е р г и н а. Санскритско-русский словарь. М., 1987:

¹² В. И. А б а е в. Историко-этимологический словарь осетинского языка. Л., тт. 1-4, 1958-1973.

¹³ Латышско-русский словарь, Рига, 1953; Я. В. Л о я. Латышско-русский словарь. М., 1946.

¹⁴ Б. С е р е й с к и е. Краткий литовско-русский словарь. Каунас, 1948.

¹⁵ И. Х. Д в о р е ц к и й. Древнегреческо-русский словарь. т. 1-2. М., 1958.

knege «տրորել», knagg «փայտե մեխ, գամ», gnaga «կրծել», nagga «կրծել, ծակել», շվեդ. gnaga «կրծել», իսլանդ. nugga «տրորել»:

Անգլ. kin, իսլ. kin «ցեղ» բառերը համապատասխանում են հայերենի ծին արմատին: Միևնույն արմատից են անգլ. knight «ասպետ», գերմ. Knecht «բատրակ, ծառա», Kind «երեխա», նորվ. knekt «պատանի», շվեդ. knekt «հնցծ. զինվոր», դան. knøs «պատանի», սանս. जन [jan], օս. zænæg «երեխաներ», հուն. γενναω «ծնել», γενσιος «արյունակից», γενος «ցեղ», γόνος «սերունդ» բառերը: Լատիներենում gen- արմատից կան genero, are «ստեղծել, ծնել», gens, gentis «ցեղ», genus «ծագում», նան (g)nascor «ծնվել, ծագել», (g)natus «որդի, բառացի՝ ծնյալ», (g)nata «դուստր», natio «ազգ, ցեղ», natura «ծնունդ, բնություն»¹⁶: Իտալերեն nascere «ծնվել», nato «ծնված» բառերում, հետևաբար, բառասկզբի n – ով ոչ թե սկսվել, այլ վերջացել է հնագույն արմատը:

Ինչպես տեսնում ենք, kn/gn (>hn) հնչյունախմբերի դիմաց որոշ դեպքերում գտնում ենք միայն n ձայնորդը¹⁷: Այսինքն՝ իսլ. nugga «տրորել», naga «կրծել», մի շարք այլ բառերում բառի հնագույն արմատը մասամբ - թաքնված է, քանի որ բառասկզբում գոյություն է ունեցել պայթական:

Այժմ դիտարկենք անգլերեն մի շարք բառեր, որոնք սկսվում են r, l, n ձայնորդներով, օրինակ՝ reed «եղեգն», reindeer «հյուս. եղջերու», ring «օղ», rime «եղյան», lid «կապիարիչ», linn «ջրվեժ», listen «լսել», loaf «բոքոն», lean «հենվել», loud «բարձրաձայն», neigh «խրխնջալ», nit «անիծ», nut «ընկույզ, կաղին», և այլն: Պարզվում է, որ հին անգլերենում այս բառերի սկզբում եղել է h հնչյունը, որը, ինչպես հայտնի է, ավելի վաղ շրջանում, հնչել է չ՝ հին անգլ. hrēod > նոր անգլ. reed, hrein > reindeer, hring > ring, hrīm > rime, hlid > lid, hlynn > linn, hlystan > listen, hlaf > loaf, hleonian, hlinian > lean, hlud > loud, hnægan > neigh, hnitu > nit, hnutu > nut, և այլն: Անգլերենի այսօրվա ուղղագրության մեջ նախնական h-ն պահպանված չէ: Այն պահպանվել է իսլանդերենում, որտեղ բառասկզբի hr, hl, hn տառակապակցություններում h-ն այլևս չի արտասանվում, սակայն - նրա ազդեցությամբ հաջորդող ձայնորդը իլացել է՝ օր.

hraður [ra:ðyr] «արագ, շտապ» (=անգլ. rathe)	hne [nje:] «ծունկ» (=անգլ. knee)
hláða [lɑ:ða] «բարձել, բեռնել» (=անգլ. load)	hneggja [neǰa:] «խրխնջալ» (=անգլ. neigh)
hnakki «ծոծրակ» - անգլ. neck	hnifur «դանակ» - անգլ. knife

Այսպիսով՝ h հնչյունի անկման հետևանքով առաջացել են r, l, n ձայնորդներով սկսվող բառեր: Հին անգլերենի օրինակները, ինչպես նաև իսլանդերենի ուղղագրության մեջ պահպանված կոկորդայինը դրա պարզ ապացույցն են՝ իսլ. hringur «օղ» - անգլ. ring (հին անգլ. hring), իսլ. hrar «հում» - անգլ. raw (հին անգլ. hrēāw), իսլ. hrafn «ագռավ» - անգլ. raven (հին անգլ. hræfn), իսլ. hle «թաքստոց, ապաստան», անգլ. lee (հին անգլ. hlēo(w)):

¹⁶ И. X. Д о р е ц к и й. Латинско-русский словарь. М., 1976.

¹⁷ Ըստ The Oxford Dictionary of English Etymology բառարանի, kn-/gn- համարվում է գերմանական լեզուների համար ընդհանուր հնչյունախումբ, որտեղ պայթական արտասանվում է գրեթե բոլոր լեզուներում, բացի անգլերենից:

Մի շարք լեզուների բառային զուգահեռները վկայում են, որ այդ բառերի - նախնական հնագույն արմատներն են՝ kVl, kVr, kVn, ուր V ձայնավորը երբեմն սղված է, սակայն այն անշուշտ գոյություն է ունեցել բառը վերջից աճելուց առաջ: Ընդ որում, հնչյունափոխության ամբողջական շղթան սկսվում է ոչ թե h-ով, այլ k-ով, որը մաշվելով դարձել է x և հետո միայն h¹⁸: Որոշ դեպքերում պայթականը կարող է միանգամից ընկնել: Օրինակ՝ անգլ. know, knee, knife, knot, knead բառերում k-ն միանգամից ընկել է և չի արտասանվում, թեպետ գրության մեջ պահպանված է մինչև այժմ:

Այն, որ ձայնորդներից առաջ եղել են հետնալեզվային կամ կոկորդային հնչյուններ, կարելի է ապացուցել ոչ միայն գերմանական լեզուների տվյալներով: Օրինակ՝ անգլ. nest «թռչնի բուն» բառը, որի առավել հին ձևը հին անգլ. նս պահպանված չէ, ակնհայտ կապ ունի ռուս. гнездо բառի հետ: Նույն կերպ՝ անգլ. nit (հին անգլ. hnitu), շվեդ. gnet, դան. gnidder, ռուս. гнида:

Կարծում ենք, նկատելի է հին անգլ. hlaf (գոթ. hlaifs, հ.բ.գ. leip, հ. նորվ. hleifr) և ռուս. хлеб, հայ. լավաշ, հին անգլ. hlynn և ռուս. хлынуть, հայ. հեղուկ - բառերի կապը: Նույնն է՝ անգլ. neigh (հին անգլ. hnoegan), շվեդ. gnägga «խրխնջալ», նորվ. knegg «խրխինջ», լատին. himire, լիտվ. žengti «խրխնջալ» և հայ. խր-խինջ (նախնական արմատն ընդգծված է)¹⁹: Մինչ այժմ չստուգաբանված եղեամն բառը մենք կապում ենք հին անգլ. hrim բառի հետ: Անգլ. rue «վիշտ, գղջում» (հ. անգլ. hrēow) և ռուս. rope բառերն ունեն միևնույն նախնական արմատը, անգլ. lade «բարձել» (հ. անգլ. hladan), իսլ. hlaða, ռուս. клад/ класть, անգլ. ring, իսլ. hringur, նորվ. kring «շրջան», krènga «գթեքել», լատին. curvus «ծուր», հուն. γυρός «կլոր» բառերի հնագույն արմատը նույնն է, ինչ հայերեն կեռ/կոր արմատն իր բազմաթիվ տարբերակներով հայերենում - (խառ «ոլորք», խարել «մոլորեցնել», բրբռ. հիռ գալ «շուռ գալ, դառնալ» և այլն) և մի շարք այլ լեզուներում:

Վերլուծելով մի շարք լեզուների բառային տվյալները, գալիս ենք այն - հետևության, որ հնչյունի անկումը բառասկզբում անհամեմատ ավելի հաճախակի հանդիպող երևույթ է, քան հավելումը: Հակառակ երևույթը՝ հետնալեզվային պայթականի հավելում արմատից առաջ, խիստ անհավանական է թվում, իսկ կոկորդայինների և հետնալեզվային շփականների հավելումը պետք է համարել մասնավոր դեպք կամ ենթաշերտային ազդեցություն, որը չի հակասում հնչյունների անկման ընդհանուր օրինաչափությանը:

Բառային նյութի քննությունը ցույց է տալիս, որ միևնույն լեզվում կարելի է գտնել նույն արմատի առավել հին և համեմատաբար նոր՝ հնչյունափոխված տարբերակներ, որոնք արտահայտում են բառի զարգացման ժամանա-

¹⁸ Անհրաժեշտ է նկատի առնել, որ հնչյունափոխության շղթայի ցանկացած «օղակ» կարող է պակասել, քանի որ երբեմն դրանք դժվար է հայտնաբերել, և կամ որովհետև այդ բառերն ուղղակի կորած են:

¹⁹ Հետաքրքիր է, որ հայերեն խրխինջ կրկնավորի առաջին արմատը գտնվում է սանսկրիտում ह्रेषा [hreṣa] «խրխինջ», ինչպես նաև ֆիններենում՝ hirmua, և էստոներենում՝ hirmuma «խրխնջալ»:

կազրական տարբեր փուլերը: Օր. հայ. կանգ>խանգարել>հանգ>անկանել>ընկնել, կրակ>խարակ>արեգ>արև, իսլ. kæla «ցուրտ» > hela «եղյամ», շվեդ. gnagga «կրծել» > nagga «ծակել», շվեդ. knyte «հանգույց», nod «հանգուցային կետ», իսլ. gneisti > neisti «կայծ» (=հայ. հնոց, շվեդ. gnista, նորվ. gneist, դան. gnist, բոլորը՝ «կայծ»):

Ապացուցելու համար, որ բառի մեջ ցանկացած դիրքում հնչյունների անկումը լեզվի պատմական զարգացման ընթացքում առավել հաճախ հանդիպող երևույթ է, քան հավելումը, փորձենք համեմատել բառերի գրության ձևը նրանց արտասանության հետ մի քանի լեզուներում (շեղ տառերով ներկայացված են այլևս չարտաբերվող հնչյունները):

Անգլերեն – knight, weigh, reign, dumb, debt, palm, folk, through, knee, write, who, what, lake, column, listen, whistle, Britain, rogue:

Ֆրանսերեն – heure, la nuit, français, mois, toit, le nez, marcher:

Իտալերեն – ho, hanno, legno, figlio, agnello:

Դանիերեն – egen [aiəŋ] «սեփական», jeg [jai] «ես», regn [rai'n] «անձրև», hjul [ju'l] «անիվ», hvad [vað, va] «ինչ», hund [hun'] «շուն», hånd [hɔ'] «ձեռք», fugl [fu'l] «թռչուն»:

Իսլանդերեն – hlera [l-] «լսել», hræra [r-] «խառնել», hryðja [r-] «հորդ անձրև», hne [njɛ:] «ծունկ», hjem «տուն»:

Շվեդերեն gjuta «լցնել», djup, djur, god[go:] «լավ», med[me:] «հետ», jag[ja:] «ես», vad[va:] «ինչ», taga[ta] «վերցնել», kläda[klä] «հագնել», hava[ha] «ունենալ», karl[ka:] «տղամարդ», värld[væd] «աշխարհ», sade[sa] «սուււ էր», lade[la] «դնում էր», ledsen «տխուր», -lig վերջածանցը, արդեն ուղղագրության մեջ արտահայտված սղումներ՝ staden/stan «քաղաք», träden/trän «ծառեր», sedan/sen «հետո», և այլն:

Նորվեգերեն det, gjord, gjøre, hjerte, hvor, kveld, mild, halv, tolv, sølv:

Ռուսերեն праздник, честный, солнце և այլն:

Բառակազմում հնչյունների անկման օրինակներ են՝ իտալերենում stasera, stanotte տիպի կազմությունները, որոնք առաջացել են questa sera «այս երեկո», questa notte «այս գիշեր» բառակապակցություններից, անգլերենում՝ I will > I'll, I had > I'd, I have > I've, հայերենի բարբառներում՝ պիտի ելնի > տ'ելնի, և այլն:

Ռուսերենի պատմական հնչյունափոխությունը փաստում է ձայնավորի անկում Գ բաղաձայնից առաջ, օրինակ՝ раб/роб, работа, ребенок < h-է *orb^hos (h. բ. գերմ. ar(a)beit «աշխատանք»), разорить < նախապլավն. *orz-oriti, палo (բրբռ. opало) < *ordlo, հիսլ. arðr, իսլ. arathar, հայ. արօր, թոխ. āre, пост < նախապլավ. *orst^h < ord-to, Руслан/Еруслан < թուրք. arslan, դազախ. aryslan, և այլն²⁰:

Բառակազմում հնչյունների անկման երևույթն առկա է նաև հայերենի բարբառներում: Վճռորոշ դեր է խաղում շեշտի անցումը հաջորդ վանկին: -

²⁰ М. Ф а с м е р. Этимологический словарь русского языка, т. 1–4. М., 1986–1987.

Բառակազմում առաջին վանկի անկում է տեղի ունենում հայերենի ում ճյուղի բարբառներում, ուր շեշտը վերջընթեր է: Բազմաթիվ եռավանկ բառերում առաջին վանկն ընկնում է, քանի որ հաջորդող շեշտահար վանկը շատ - ուժգին է հնչում: Օրինակ՝ արածել>րա ծել, առաջին>ռա ջին, արեգակ->րե գնակ, երեխա>րե խա, րա խա, իրիկուն>րի գուն, երևալ>րև ալ, ուղարկել->ղա ըկել, առավոտ>ռա վոդ, ռա վետ, հորովել>ոն էլ, որվել, երեսին>րե սին, - անկողին>կո ղինք, գո ղինք, աղաչել>ղա չել, աղաչանք>ղա չանք, դա նչանք, առանձին>ռա նձին, որոտալ>րո տալ, հրեսի>րե սի, հրենիկ>րե նիկ, անալի>- նա լի:

Երկվանկ բառերում հանդիպում ենք՝ եղունգ>ղունգ (հոգն. ղնգներ), ուղեղ>ղուղ, նշանց տալ>շանց տալ: Այսպես է Լոռու, Ղազախի, Արցախի, Սյունիքի, Ուտիքի և այլ բարբառներում: Որոշ դեպքերում առաջին վանկում - պահպանվում է ը հնչյունը (ըրա ըմունք, ըրո ըոց, ընա խում, ընա բատ, ընե ծիլ, ըրե սուն, ըրա ծել): Այս բարբառներում բառերը պահում են իրենց - սկզբնական ձևը, եթե առաջին վանկը շեշտակիր է, և հնչյունափոխվում են բառը վերջից աճելիս: Օրինակ, է ըրազ>ըրա գում, ա ղաք>ղա քին, է ըես>րե սին, ա ղքատ>ըրքա տի, ա շխարհ>ըշխա ըում, ա խչիկ>ըխչըկա նը: Նոր Ջուղայի բարբառում նկատվում է բառակազմի հ հնչյունի անկում՝ հրամայել->րամայել, հնազանդ>նազանդ, հրեշտակ>րեշտակ, հրաշք>րաշք, հրես>րես, հրեդ>րեդ, հրեն>րեն: Որոշ բարբառներում հանդիպում են. Վան՝ ընկոյգ>գոգ, ընկեր>գեր, ինձի>ձի, ձիկ, նմանել>մանել, Ագուլիս՝ գնալ>նեոլ, ածելի>ծելի, և այլն:

Որոշ լեզուներում բառակազմում տեղի է ունենում ձայնավորի հավելում: Ձայնավորը ծառայում է իբրև հենարան, օրինակ, թամիլերենում, ուր բառակազմում անսովոր է ր կամ լ արտասանելը (օր. սանս. lōka «աշխարհ», թամիլ. ulōgam)²¹:

Իսպանացիները բառակազմում բաղաձայնների կուտակումից խուսափելու համար ավելացնում են e ձայնավորը՝ espiritu «ոգի», esquema «սխեմա», - estacion «կայարան», esperanza «հույս», esteril «անպտուղ», նույնիսկ ռուսերենից փոխառյալ estepa «տափաստան, ստեպ»: Բառակազմում, ինչպես գիտենք, անսովոր է ո և ը հնչյունների արտասանությունը նաև հայերենում, որը թույլ է տվել ենթադրելու, թե արագ, արև, երանգ, երագ և այլ բառերում բառակազմի ձայնավորը հավելում է: Մակայն դիտարկված լեզուներից ոչ մեկի տվյալները պատմական հնչյունափոխության տեսակետից հիմք չեն տալիս կարծելու, թե դրանցում բառակազմի հնչյունի կամ հնչյունախմբի հավելում է տեղի ունեցել: Բոլոր փաստերը վկայում են հնչյունների անկման մասին²²:

Հնդեվրոպական լեզուներում կան լ, ր, ո ձայնորդներով սկսվող բազմաթիվ արմատներ, որոնց նախավանկի ձայնավորը պահպանված է հայերենում: Հայերեն արբել (հնիս. srbh-) բառի հետ հավանաբար կապ ունեն հուն. λειβω

²¹ Հ. Ա ճ ա ո յ ա ն. Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Երևան, 1971, էջ 645:

²² Վերոհիշյալից չի կարելի բխեցնել, թե հայերենում ձայնավորի հավելումով բառեր առհասարակ չկան:

«լցնել, լցվել», լատիշ. reibinat «արբեցնել» բառերը, հայ. արսուր (հն/ս. drak'ru) բառի զուգահեռներն են՝ սանս. रोदाना [rodānā] «լաց», ռուս. рыдать, լատիշ. raudas «լաց» բառերը: Որոշ չստուգաբանված բառերի դիմաց գտնում ենք՝ հայ. արձան – սանս. रच[raç] «ստեղծել, արարել», रचन[raçana] «ստեղծում, արարում, ստեղծագործություն», հայ. երփն – լիտվ. raibas, լատիշ. raibs «խայտադիպ», ռուս. рябой, հայ. երախ – հին անգլ. hraca, գերմ. Rachen, ռուս. рожа:

Տիպաբանորեն ավելի արդարացված է այն պնդումը, թե դրանք ուղղակի մաշվել-ընկել են, մանավանդ որ դրանք պահպանված են ոչ միայն հայերենում: Այս տեսակետի օգտին է խոսում այն պարզ փաստը, որ շատ լեզուներում պահպանված է ոչ միայն ձայնավորը, այլև հնում նրան նախորդած հետնալեզվային պայթականը, շփականը կամ կոկորդայինը: Պատմական այս օրինակները հաշվի առնելու դեպքում հնարավորություն ենք ստանում միանգամայն իրական կապեր տեսնելու ոչ միայն մեկ լեզվաընտանիքի ներսում, այլև տարբեր լեզվաընտանիքների պատկանող լեզուների միջև:

* * *

Մի կարևոր հանգամանք մեզ ստիպեց առավել լուրջ ուշադրություն դարձնել այսպես կոչված «թաքնված» հետնալեզվայիններին: Պատահական համեմատություն կատարելով հայերեն և ֆիննաուգրական որոշ արմատների - միջև, նկատեցինք, որ շատ հայերեն բառերի դիմաց ֆիննաուգրական համարժեք արմատը բառասկզբում գրեթե միշտ ունի հետնալեզվային պայթական հնչյուն: Օրինակները բազմաթիվ են՝ հունգ. kelni «ելնել, բարձրանալ, ծագել», kelet «արևելք»²³ – հայ. էլ, հունգ. kerdes – հայ. հարց, էստ. kust²⁴, ֆինն. kusta²⁵ «որտեղից» – հայ. ուստ-ի, ֆինն. kolea – հայ. խուլ, կոմի гуран²⁶ «փոս, խանդակ» – հայ. հոր, ուղմ.²⁷ гуртаны «քայլել» – հայ. երթ, кисьманы «հասունանալ» – հայ. հաս, հասնել, ուղմ. кельмот «ստոնամանիք», էրզյ. кельме²⁸ «ցուրտ», մարի. кылме²⁹ «ստոած», ֆիններեն kylmä «սառը» – հայ. եղեամն, հունգ. kesni «ուշանալ» – հայ. ուշ, ֆինն. küpsema «հասունանալ», küps «հասած, հասուն» – հայ. եփ, գուցե նաև հունգ. kigyó – հայ. օձ, և այլն: Օրինակներն այնքան շատ են, որ եթե հաշվի առնենք նաև բառիմաստի համընկնումը, ուղղակի դժվար է պատահական համարել:

Նկատվում է նաև հակառակ երևույթը: Հայերենի պայթականով սկսվող արմատների դիմաց ֆիննաուգրական լեզուներում գտնում ենք h հնչյունով

²³ Венгерско-русский словарь, М.–Буд, 1987.

²⁴ И. А. Т а м м. Эстонско-русский словарь. Таллин, 1977.

²⁵ Финско-русский словарь. М., 1975.

²⁶ X. A. К о л е г о в а. Коми-русский словарь. М., 1976.

²⁷ Удмуртско-русский словарь. М., 1948.

²⁸ М. Н. К о л я д е н к о в, Н. Ф. Ц ы г а н о в. Эрзянско-русский словарь, 1949.

²⁹ Марийско-русский словарь. М., 1956.

սկսվող բառեր: *Օրինակ՝ հունգ. hőség «շոգ, տապ» – հայ. կէզ, húsz «քսան» – հայ. քսան, hurok «հանգույց», horgg «կեռիկ» – հայ. կեռ, hany «քանի» – հայ. քանի, ֆինն. hokea «կանչել, կոչել» – հայ. գոգ, և այլն:*

Նախորդ նյութերից մեկում հնդեվրոպական լեզուներից վերցված օրինակներով մենք փորձել ենք ապացուցել, որ հայերեն հետնալեզվային պայթականներով սկսվող արմատները նախնական են: Փաստարկները երկուսն էին. նախ՝ հին անգլերենի օրինակով ցույց էինք տվել, որ $g/k \sim y$ կամ $g/k \sim w/v$ լծորդության դեպքում տիպաբանորեն առավել արդարացված է պայթական $>$ ձայնորդ անցումը, և երկրորդ, հայերենի հետնալեզվային պայթականներով սկսվող արմատներին հնդեվրոպական լեզուներում համապատասխանում են ոչ միայն v/w – ու վ սկսվող արմատներ: Հայերեն գործ արմատի դիմաց ունենք լատին. *creo, āre «ստեղծել», հունարենից փոխառյալ՝ gerdius «ткач», gerra «плетенка», հուն. κραίνω «անել, կատարել», սանս. कर [kar] «կատարել», հինդի करना [karnā] «անել», իսլ. gerð «արարք», շվեդ. göra «գործ», գյորդ «արված», նորվ. gore «անել», հայ. գետ – օւ. kada «գետակ, առու», շվեդ. gjuta «լցնել, ջրել», նորվ. gyte «լցնել», հայ. գիր – լատին. scribere «գրել», հուն. γραφω «քերծել, փորագրել», սանս. [kiraka] «գրագիր» և այլն:*

Երրորդ փաստարկը վերոհիշյալ պնդման օգտին այն է, որ հայերենի հետնալեզվային պայթականներով սկսվող արմատներն ունեն գուցա հեռուներ նաև ֆիննաուգրական լեզուներում: Հաշվի առնելով նաև $g/k \sim y$ անցումը՝ ֆիննաուգրական լեզուներում գտնում ենք՝ *հունգ. gyar «գործարան», gyartani «արտադրել», կովի керны «անել, կառուցել», ուղւ. карыны «անել, օժ. բայ», көртны «հյուսել (ավել)», էրզ. ерамс «պատրաստել» – հայ. գործ-ել, կովի кодавы «խմել, արբել», код «արբած», коддыны «արբել», ուղւ. кот «թաց, խոնավ», куд «խմած» – հայ. գետ, ֆինն. kirja «գիրք», kirje «նամակ», kirjoittaa «գրել», kirjain «տառ», էստ. kiri «գիր, նամակ», kirjutama «գրել», մար. кореш «գիծ», կովի кырым «ստորագրություն» – հայ. գիր, ըստ որում, ֆիննաուգրական լեզուներում կարելի է գտնել նաև հայերենի չստուգաբանված կամ օտար փոխառություն համարվող որոշ բառերի գուցաբանությունները, օրինակ՝ *հայ. կոր/կեռ – ֆինն. käyrä «ծուռ, ծոված», jyrkkä «թեք», hyttä «հոլ», hyttätä «պտտվել», հունգ. kerek «կլոր», kerék «անիվ», köt «շրջան», էստ. keeris «շրջապտույտ», էրզ. куро «շրջան», кире «կծիկ», մար. йöраш/яраш «զլորել», йыр «շուրջ», հայ. գէս/հիւս – հունգ. guzs «պարան», ֆինն. hius «մազ», էստ. juus «մազ», կովի кузя «ոլորված թել», էրզ. кесак «թելի կծիկ», ուղւ. гозы «պարան», ез «լար»: Այսինքն՝ այս արմատների բառակազմի հետնալեզվային պայթականները հայերենում հնչյունափոխված չեն, ճիշտ այնպես, ինչպես հնչյունափոխված չեն, օրինակ, գերդ- և կուրծ արմատները: Ֆիննաուգրական լեզուներում այդ արմատների դիմաց գտնում ենք՝ *հունգ. kert «այգի», կովի горт «տուն», йöр «загон, շրջափակված տարածք», ուղւ. гурт «գյուղ, տուն», карта «хлев, բրբռ. տուն, բակ», մոկշ. корам, юрхта³⁰ «բակ» – հայ. գերդ, կովի***

³⁰ С. Г. П о т а п к и н, А. К. И м е р я к о в. Мокшанско-русский словарь. М., 1949

курдодны «*ուտել*, разье дать», курччыны «*կծել*», йирны «*կրծել*», ուղւ. йырйыны «*կրծել*» ֆինն. *jyrsia* «*կրծել*» - *հայ.* կուրծ-/ կրծել/: *Գտնում ենք նաև* g/k ~ y *անցումով հնդեվրոպական – ֆիննաուգրական հետաքրքիր զուգահեռներ*, - *ինչպես՝* *ռուս.* корень – ֆինն. *juuri*, *էստ.* *juur* (= *հայ.* արմատ), *սանս.* *ku* – *կոմի* йылӧм «*սերունդ*», *անգլ.* *yolk* «*դեղնուց*» – *կոմի* колък «*ձու*», *գերմ.* *kennen* – *մոկչ.* ёнь «*խելք, միտք*», *մար.* *кын* «*հիմաստ*»:

Կոկորդայինների հայտնի տեսությունը ևս կարող է համարվել այն իրողության հաստատումը, որ լեզվի զարգացման հնագույն շրջանում բառակազմում ձայնավորից առաջ արտասանվող հետնալեզվային կամ կոկորդային - հնչյունները «հենարանի» դեր են խաղացել, և գործնականում դժվար է գտնել ձայնավորով սկսվող որևէ արմատ, որն իր կոկորդայինով սկսվող փոփոխակը չունենա մի այլ, թեկուզ և ուրիշ լեզվաբնույթի պատկանող, լեզվում: Որպես հավելյալ ապացույց ասվածին՝ հիշեցնենք, որ Ա. Բոմհարդը, փորձելով վերականգնել «նոստրատիկ նախալեզվի» բառարմատները, եկել է այն հետևության, որ մարդկային լեզվի զարգացման վաղնջական շրջանում չեն եղել ձայնավորով սկսվող բառեր³¹:

Ներկայացնելով հայերեն որոշ արմատների հնդեվրոպական և ֆիննաուգրական զուգահեռները՝ ցանկանում ենք շեշտել, որ r և l (մասամբ՝ n) ձայնորդներով սկսվող արմատները նախնական չեն: Այդ ձայնորդներին նախորդել են ձայնավորներ: Առավել հնատիպ են հետնալեզվային/կոկորդային +(ձայնավոր)+ ձայնորդ հնչյունախմբով սկսվող արմատները:

հայ. առ(առնով) *հ.-է.* – *հուն.* αἶρέω «*վերցնել, խլել, տիրանալ*», ἄρνυμαι «*ձեռք բերել, ստանալ*», *լատին.* *haurio* ἵρε, «*վերցնել*», *սանս.* अर्ज[arj] «*վերցնել, ստանալ*», ऋण [rṇā] «*պարտք*», हर [har] «*վերցնել, ստանալ*», हार [hāra] «*կողոպուտ*», *սանս.* अर्ना[arṇā] «*կանգ առնել, մի բանի դեմ ընկնել*», հինդի हारना[harnā] «*խլել, առնանգել*», *հ.անգլ.* *earnian*, *անգլ.* *earn* «*վաստակել*», *hire* «*վարձել*», *հ. բ.* *գերմ.* *arnen* «*վաստակել*», *գերմ.* *ernten* «*բերքը հավաքել*», *իսլ.* *ræna* [rai:na] «*կողոպուտել, խլել*», *նորվ.* *rane* «*կողոպուտել*», *հերյե* «*կողոպուտել*», *hyre* «*վարձել*», *շվեդ.* *råna* «*կողոպուտել*», *հար* (*hava* բայի ներկա ժ.) «*ունենալ, տիրել*», *äring* «*հնցծ. բերք*», *լիտվ.* *rinke* «*շուկա*», - *ռուս.* рынок, *նաև՝ պարս.* *xaridna* «*առնել, գնել*», *xarid* «*գնում*», *r-l անցումով՝* *իսլ.* *lana* «*պարտք վերցնել*», *շվեդ.* *låna* «*պարտք վերցնել*», *lön* «*աշխատավարձ*», *անգլ.* *loan*, *լատին.* *laimet* «*շահել*»:
Ֆ.-ու. – *ֆինն.* *aarre*, *aarni*, *arnio* «*զանձ*», *erä* «*1. որս, ավար, 2. մաս, բաժին*», *haalialia* «*հավաքել, բռնել*», *էստ.* *aare* «*զանձ*», *haarama* «*առնել, գրավել*», *haarav* «*գրավիչ*», *üürima* «*վարձել*», *մար.* *араш* «*պարտք վերցնել*», *ыр* «*բուռ, горсть*»,

³¹ A l l a n R. B o m h a r d. Recent Trends in Nostratic Comparative Linguistics.– Bulletin of the Georgian National Academy of Sciences, vol. 2, 2008, № 4, p.151.

<p>հայ. արդ (h.-է. *art-), արդար</p>	<p>руалташ «хватать», կովի арыштыны խսկց. «գրավել, յուրացնել», էրզ. рамамс «գնել», իսանս. ägəñ «պարտք», äñəñ «պարտապան»³²:</p>
<p>հայ. արդ (h.-է. *art-), արդար</p>	<p>h.-է. լատ. ōrdo, inis «շարք, շերտ», սանս. ऋत[ṛta] «ճշմարտություն», հինդի ऋतु[ṛtu] «կարգ», հուն. αργος «կարգ», շվեդ. rede «կարգ», rad «շարք, հերթ», նորվ. røde «1)անկողինը հարդարել 2)կարգ», իսլ. röð li hirða «կարգ», raða «շարքով դասավորել, կարգի բերել», օս. rad/ radæ «հերթ», պարս. rada «շարք», լատիշ. kārtā «կարգ, շերտ», ռուս. ряд, լատիշ. rotāt «գարդարել», rota «հագուստ», հայ. արդար բառի դիմաց՝ իսլ. artarlegur «լավ, բարի» /-legur՝ ածականակերտ ածանց, = գերմ. -lich, անգլ. -ly/, հայ. արդեն - շվեդ. redan «արդեն», նորվ. røde «պատրաստ», անգլ. ready «պատրաստ»: ֆ.-մ. – կովի арт рррп. «1.շարք, կարգ, 2.պաշտոն, դիրք», артавы «հաշվել», арталом «հաշիվ», էրզ. арт «ստեղծագործություն, ստեղծագործած նախշ», артнемс «1. ներկել, 2. ստեղծագործել», էստ. kord «կարգ, հերթ, շերտ»:</p>
<p>հայ. առու (h.-է. *sru)</p>	<p>h.-է. – սանս. अर्णव [arṇav] «օվկիանոս, ծով», հուն. ουρος «ջրանցք, առու», ρεω «հոսել, լցվել», ρέος «հոսք, հոսանք», κρήνη «աղբյուր», լատ. curro «հոսել», rīvus, ī «առվակ, ջրանցք, հոսք», շվեդ. rinna, «հոսել, լցվել», նորվ. renne «1) ջրհորդան, հոսել 3)լցնել», լատիշ. rene «ջրհորդան, առու», գեյս. «առու, ակոս», իսլ. renna [rɛn:a] «վազել», սանս. अर्ण [arṇa] «ալիք; հոսանք, հոսք», अर्ण [arṇ] «հոսել»: ֆ.-մ. – հունգ. ar «հոսք», aram «էլ. հոսանք», aradas «հեղեղում», ֆինն. ougu «առու, առվակ», järvī «լիճ», kuuro «անձրև, ливень», էստ. järv «լիճ», կովի рррп. кырөд «ջրանցք, առու», куръя «заводь, залив /գետում, լճում/», ուղւ. öp «առվակ», оръяскон «հոսք, հոսանք», оръяскыны «հոսել», մար. ер/йәр «լիճ», юр/йөр «անձրև», юраш «անձրևել», ераш «լճակ, ջրափոս», әр хүгд. «գարնանային հեղեղումից առաջացած ջրափոս», էրզ. эрьке «լիճ», ёрвалемс «ողողել», մոկշ. эрькке «լիճ»:</p>
<p>հայ. արջ (h.-է. *ktho-)</p>	<p>h.-է. – լատին. ursus, սանս. ऋचछ [ṛcṣa], ऋकष[ṛkṣa] հինդի रीछ[ṛiṣ], հուն. αρκτος լատիշ. lācis, լիտվ. lokys, օս. ars, պարս. xirs, պամիրի լեզուներ yars, yērš, yūrš, կելտ. art, arth, բռլորը՝ «արջ»: ֆ.-մ. – ֆինն. karhu, էստ. karu «արջ»:</p>
<p>հայ. արջ «սև»</p>	<p>h.-է.– սանս. रजनी [rajani], «գիշեր», լիտվ. rašalas «թանաք», իսլ. rökkur «աղջամուղջ», լիտվ. rusvas «գորշ, рыжеватый», рыжий, նաև նախաձայն հետնալեզվայիններով և</p>

³² Н. И. Т е р е ш к и н. Словарь восточно-хантыйских диалектов. Л., 1981.

- կոկորդայիններով՝ սանս. कृष्ण[kr̥ʂɳa] «սև, մուգ», कृष्णी[kr̥ʂɳī] «գիշեր, մթնոթյուն», հայ. գորշ, օս. xəɾæ «մոխրագույն», պարս. xirah «մուգ, մութ», աֆղ. xəɾ «կեղտոտ դարչնագույն», հ. անգլ. härr, згæз «մոխրագույն» (>ն. անգլ. grey) «մոխրագույն», իտալ. grigio «մոխրագույն»: Արանը իրանական արմատը կապում է նաև թուրքերեն qara «սև» բառի հետ³³: Հ. Աճառյանը հայերեն արջն-ը համարում է կովկասյան փոխառություն³⁴:
- Ֆ.-ու. – ֆինն. ruskea «դարչնագույն», էրզյան. раужо «սև», մոկչան. равшкодемс «սևանալ»
- հայ. եղեամն հ.-ե. – հուն. κρύος «սառնամանիք», լատին. gelo, āre «սառեցնել», gelidus «սառը», glacio, āre «սառեցնել», հ.անգլ. celan «սառչել», hrim «եղյամ» (>ն.անգլ. rime), ն. անգլ. cold, գերմ. kalt «ցուրտ», «Reif «եղյամ», հ. իսլանդ. kala «սառչել», իսլ. kyla/kæla «ցուրտ», hela[jela], hrim[rim] «եղյամ», նորվ. hèle «եղյամ», դան. køle «սառեցնել», օս. xalas/kyrs «եղյամ», հ. ռուս. голотъ «սառույց», холод/хлад-:
- Ֆ.-ու. – ֆինն. halla «սառնամանիք», kolea, kylmä «սառը», /kylmä kesa - ցուրտ ամառ/, kuura, huurre, härmä «եղյամ», haalea «զով», lumi «ձյուն», luminen «սառած», էստ. külm «սառը», harm «եղյամ», hall «սառնամանիք», lumi «ձյուն», հունգ. harmat «եղյամ», կովի гыör «եղյամ», лымы «ձյուն», ёльк «սառած», ուրմ. гөр «եղյամ», մար. рүн «եղյամ», лым «ձյուն», кылмаш «սառչել», кылме «սառած», էրզյան. кельме «սառնամանիք, ցուրտ», лов «ձյուն», մոկչ. Кельмот «սառնամանիք»:
- հայ. եղեմն հ.-ե. – հուն. κηλς, ιδος «մահ», ολέω ολλυμι «սպանել, ոչնչացնել», հ. անգլ. quellan «սպանել», ն. անգլ. quell «ճնշել», kill «սպանել», իսլ. hel «մահ» (i hel «մահացու», helboð «մահվան բողոք»), նորվեգ. kola «մեռնել» (i hjel «մահացու»):
- Ֆ.-ու. – հունգ. halni «մեռնել», halal «մահ», ölni «սպանել», ֆինն. kuolla «մեռնել», kalma, kuolo, kuolema «մահ», կովի ն ուրմ. кулыны «մեռնել», кулон «եղեռն», կովի кулом «մահ», ուրմ. кулом «մահ», кулэм «մեռած», / кулэм мурт-հանգուցալ/, մար. колаш «մեռնել», էրզ. куломс «մեռնել», кулома «մահ», մոկչ. кула «մեռած»:

³³ В. И. Абаев. Историко-этимологический словарь осетинского языка, т. 4. Л., 1958.

³⁴ Հ. Աճառյան. Հայերեն արմատական թափափան, հ. 1, Երևան, 1971:

ПАДЕНИЕ ЗАДНЕЯЗЫЧНЫХ И ГУТТУРАЛЬНЫХ ЗВУКОВ
В НАЧАЛЕ СЛОВА
(На материале армянского, других индоевропейских и
финно-угорских языков)

ГОАР НИКОГОСЯН

Р е з ю м е

Типологическое сравнение данных ряда индоевропейских и финно-угорских языков с лингвистическими данными армянского языка показывает, что заднеязычные взрывные с течением времени вследствие износа превращаются в щелевые или полностью исчезают, в результате чего могут “открыться” последующие гласные или сонанты. Иногда может исчезнуть весь первый слог корня. В некоторых случаях решающим фактором мог являться перенос ударения на следующий слог. В пользу вышеизложенного говорит то обстоятельство, что при учетывании вышеназванных фонетических изменений представляется возможным определить изоглоссы многих армянских корней, которые до сих пор не имеют своих этимологических параллелей в других индоевропейских языках. Износ фонем является одной из важнейших закономерностей исторического развития языка и предоставляет большие возможности как для внешней, так и для внутренней реконструкции языка.

FALL OF BACK-LINGUAL AND GUTTURAL SOUNDS
IN WORD-INITIAL POSITION
(On the material of the Armenian, other Indo-European and
Finno-Ugric languages)

GOHAR NIKOGHOSSYAN

S u m m a r y

Typological comparison of linguistic data of several Indo-European and Finno-Ugric languages with the linguistic facts of the Armenian language shows that back-lingual stops wear out in the course of time and turn into fricatives or disappear altogether, as a result of which the following vowels or sonants may “open”. Sometimes the whole first syllable of the root may disappear. In some cases the stress shift to the following syllable is supposed to be decisive. Consideration of the above-mentioned phonetic shift enables to determine isoglosses of many Armenian roots which are not supposed to have etymological parallels in other Indo-European languages. Wearing out of phonemes is one of the most important regularities in the historical development of language. It offers large opportunities for both external and internal reconstruction of language.